ԸՆԹԵՐՑՈՂԸ ՄԵՐ ԹԵՐԹԻ ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆՆ Է

# ՆԱԶԻԿ ՈՍԿԱՆՅԱՆ. «ԴՈՒ ՊԱՏՎՈՎ ԵՍ ԿԱՏԱՐՈՒՄ ՔՈ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ, ՄԵՐ ՍԻՐԵԼԻ «ՎՐԱՍՏԱՆ»

*Արդեն 102 տարեկան դարձած եւ իր ծննդյան օրը 1920թ. դեկտեմբերի 25-ը համարող «Վրաստան»-ը, ինչպես գիտեք, ունի տարբեր տարիքի, տարբեր հետաքրքրությունների ու տարբեր պահանջների ընթերցողներ: Դա մի կողմից պատասխանատվության է կոչում, մյուս կողմից բարոյական ուժ է տալիս ցանկացած պարբերականի, քանի որ ինչպես մենք, նույնպես եւ թերթը ուզում է ունենալ անդավաճան բարեկամ՝ հարազատ ընթերցող, ով իր կողքին է մշտապես եւ զգում է իր՝ թերթի պահանջը: Նման նախանձախնդիր ընթերցողը մեր թերթի հարստությունն է եւ մղում է մեզ նորից ու նորովի վերաարժեւորել Թերթ-խոսքը: Այսօր դա ուզում ենք անել «Վրաստան» թերթի մեծ բարեկամ, վիրահայ կրթաշխարհում իր արհեստավարժությամբ ճանաչված մանկավարժ, 93-ամյա Նազիկ Ոսկանյանի օգնությամբ:*



«Վրաստանի» հետ Ն.Ոսկանյանի կապվածությունն առանձնահատուկ շեշտվածություն ունի, ինչում դժվար չէ նկատել հետքերը մանկավարժական երկարատեւ գործունեության (1951-2011թթ.), որ սկսվել է 70 տարի առաջ՝ Լենինականի (այժմ՝ Գյումրի) Մ.Նալբանդյանի անվան մանկավարժական ինստիտուտում հայոց լեզվի ու գրականության ուսուցչի մասնագիտություն ստանալուց հետո: Բացի Թբիլիսիի այժմ չգործող թիվ 93 եւ ներկայիս թիվ 104 հայկական դպրոցներից, Ն.Ոսկանյանը դասավանդել է նաեւ մայրաքաղաքի Առաջնորդանիստ Սբ. Գեւորգ եկեղեցու՝ Սբ. Եղիա Մարգարեի անվան կիրակնօրյա դպրոցում՝ մայրենին սովորեցնելով օտարալեզու կրթություն ստացած հայ մանուկներին: Արհեստավարժ մանկավարժը հաճախ ներգրավվել է Թբիլիսիի Ալ.Պուշկինի անվան մանկավարժական ինստիտուտի (այժմ՝ Իլիայի անվ.մանկ.համալս.) հայկական բաժնի ընդունելության հանձնաժողովի աշխատանքին: Այդ ամենի հետ նա մեծ պատասխանատվությամբ թղթակցել եւ օրեցօր կապվել է երկրի հայկական պարբերականին ու մի գեղեցիկ օր հասկացել, որ պարզապես չի կարող անտարբեր մնալ «Վրաստանի» ճակատագրին, չսրտակցել թերթի հաջողությանն ու անհաջողությանը, չողջունել հերթական համարը, իր դիտողությունները, կարծիքը չհայտնել այս կամ այն հոդվածի մասին, ինչը, անկեղծ ասած, սպասում ենք մեր բոլոր ընթերցողներից եւ, իմիջիայլոց, ստանում ենք:

***- Տիկին Նազիկ, մեր հանդիպումը զուգադիպեց Ձեր կյանքի կարեւոր փաստին՝ ծննդյան օրվան, թույլ տվեք խմբագրակազմի եւ թերթի ընթերցողների անունից, ամենաջերմ մղումներով ու ցանկություններով, շնորհավորել Ձեր ծննդյան 93-ամյակը: Արեւշատություն Ձեզ: Թող ձեր հոգում միշտ անդորր լինի, իսկ ընտանիքում թող միշտ թեւածեն սերն ու ջերմությունը:***

***Եվ այսպես՝ ինչպե՞ս եւ ե՞րբ կապվեցիք թերթի հետ:***

- Անչափ շնորհակալ եմ՝ շնորհավորանքի ու բարեմաղթանքի համար: Ինչ վերաբերում է թերթին՝ նրա հետ կապս սկսվեց թղթակցությամբ. հարկ եղավ, որ ես՝ Վրաստանի կրթության նախարարության սահմանած հերթական դպրոցական օլիմպիադայի աշխատանքները լուսաբանեմ այն օրերին «Սովետական Վրաստան» անվանվող մեր թերթում: Հաղթահարելով մտավախությունս, թե կկարողանա՞մ արդյոք պատշաճ կատարել ինձ վստահվածը, գրեցի ու, ի զարմանս ինձ, ստացա քաջալերող արձագանքներ՝ գործընկերներիս, ծնողների, կրթական շրջապատի կողմից: Այդպես, առաջին հոդվածին հետեւեցին հաջորդները՝ տեղի մանկավարժականի հայկական բաժնի ուսանողների՝ Թբիլիսիի հայկական դպրոցներում անցկացրած պրակտիկայից ստացած տպավորությունների, դպրոցական կյանքի կարեւոր իրադարձությունների, երբեմն՝ նաեւ մանկավարժներիս մասնագիտական խնդիրների, մեթոդական տարաձայնությունների մասին... Իհարկե, ինձ ոգեւորեցին թերթի պատկառելի անձնակազմի, առանձնապես՝ Բենիկ Սեյրանյանի՝ հոդվածներիս մասին կարծիքները: Ըստ նրանց՝ ես ճիշտ, կողմնորոշված եւ ուսանելի մանկավարժական դիտարկումներով կարողացել էի ապահովել հոդվածների նպատակասլացությունը: Անկեղծ ասած՝ չեմ դժվարացել, քանի որ իրականում թղթակցել եմ ներքին բավարարվածութան ու նաեւ շնորհակալության զգացումով:

***- Ասում են՝ գիտելիքներ տալիս են դասագրքերը, գեղարվեստական գրականության ծարավը հագեցնում են վեպերը, բանաստեղծությունները, ի՞նչ կասեք այդ տեսակետից թերթի մասին:***

- Ինչպես Սայաթ-Նովան կասեր՝ թերթի «գիրն ուրիշ գրեն է»... Ինձ շատ են օգնել թերթի կրթական թեմաների լուսաբանումները, գրականագիտական գնահատականները՝ հրապարակվող գրքերի մասին, դրանց գրախոսականները, արվեստի, թատերական ներկայացումների գնահատումները, որ թերթում անում էին ոլորտին գիտակ մասնագետներ: Երջանկահիշատակ Բենիկ Սեյրանյանը, Մրազ Ջաֆարովը, Օֆելյա Միրզոյանը, Անահիտ Բոստանջյանը, երիտասարդներից Դոնարա Զուռնաչյանը եւ մյուս լրագրողները հաճախ հարցազրույցներ էին ունենում տարբեր ոլորտի մտավորականների հետ: Այդ խորագրերը ընդլայնում, հագեցնում էին գեղարվեստի մասին մեր պատկերացումները, իրազեկ դարձնում ժամանակակից գրական նորույթներին:

***- Հիշո՞ւմ եք դասաժամ, երբ թերթը աջակցել է ուսուցանելուն, օգնել՝ հագեցնելու դասի պահանջը:***

- Հիշում եմ, երբ Թբիլիսիում գտնվող Սիլվա Կապուտիկյանը այցելեց մեր դպրոց, թերթը լուսաբանեց այցը: Այդ հոդվածը օգնեց աշակերտներին՝ Բանաստեղծի մեջ տեսնել նաեւ մարդուն, հասկանալ, որ բանաստեղծը սովորական մահկանացու է, ով կարող է տխրել, ուրախանալ, սխալվել, զայրանալ, քաղց ու ծարավ զգալ... Այդ հանդիպումից հետո՝ ես նկատեցի, որ, որեւէ բանաստեղծի, գրողի մասին խոսելիս, ավելի կյանքային ու իրական էր դարձել նրանց ընկալումը, նրանք հեղինակի մեջ արդեն կարողանում էին տեսնել մարդուն եւ նրա կենսագրության մեջ նկատել իրենց համար օրինակելին:

***- Այսօր ընտրությունը մեծ է. ունենք լրատվական հարուստ ցանց՝ համացանց, ռադիո, հեռուստացույց. Ձեզ համար ինչո՞վ է առանձնահատուկ թերթը:***

- Իհարկե, մեծ է համացանցի տեղեկատվական դաշտը: Կարող է տալ համակողմանի լրատվություն, կոնկրետ պատասխանել հետաքրքրող հարցին ու դա անել անմիջապես: Բայց կա մի բան, որ իմ կարծիքով միայն թերթին է արտոնված: Դա թերթի հստակ կողմնորոշող խորագրերն են. երկրի հասարակական ու քաղաքական կարեւոր փաստերի հանգամանալի լուսաբանումները: Գրական, բեմական եւ այլ ոլորտների մեծերի կյանքն ու գործունեությունը, այստեղ, ներկայացվում են նպատակամետ՝ իբրեւ կյանքի ուսանելի օրինակներ: Լուսաբանվում է Վրաստանի բուհերում ուսանող հայ երիտասարդության կյանքը, հատուկ խորագրերով խրախուսվում են տաղանդավոր երեխաները: Թերթը գիրք չէ, որ կարդաս ու մի կողմ դնես, նա կենդանի զրուցակից է, որ հիմնավորում է մտքերդ... Վերջապես, անձամբ ես, շտապում եմ ստանալ թերթը, որպեսզի իրազեկվեմ նաեւ Հայաստանի, Արցախի անցուդարձին, կարդամ ինձ համար շատ հետաքրքիր Վիրահայոց թեմի առաջնորդի կիրակնօրյա քարոզխոսությունը...

***- Ուրիշ ի՞նչ խորագրեր կուզենայիք տեսնել «Վրաստան» թերթում:***

- Այն բոլոր խորագրերը, որոնք կվերաբերեն երիտասարդության դաստիարակությանը, կտան նրան հոգեւոր սնունդ, կմղեն՝ իրենց նիստուկացով, մարդկային էությամբ ու քաղաքացիական նկարագրով ծառայել Վրաստանին, սիրել հայրենիքը, բարին բերել ծնողներին, անդավաճան ընկեր ու կողակից լինել: Կուզենայի տեսնել խորագրեր, որոնք երիտասարդությանը կներշնչեն հայրենիքը չլքելու գիտակցություն եւ ամուր կապերով կկապեն նրան իր ծննդավայրին: Կուզենայի ավելի շատ լսել այսօրվա գրական աշխարհի մտավորականների ձայնը, ավելի շատ ծանոթանալ սփյուռքահայության կյանքին:

***- Ձեր կարծիքով՝ առանձնապես ի՞նչն է նպաստում թերթի հետ երիտասարդության կապին:***

- Նախ՝ ծնողի, ապա եւ՝ ուսուցիչների անձնական օրինակը: Երեխան թող տեսնի թերթի անհրաժեշտ ներկայությունը ընտանիքում, դպրոցում: Դասարանում՝ հետաքրքրող հոդվածների քննարկումները, նաեւ, ինչո՞ւ չէ, շնորհալի դպրոցականի թղթակցելը թերթին: Եթե փոքր հասակից հարազատանա թերթին, չի կարող չկապվել նրա հետ:

***- Դուք միշտ հպարտությամբ եք խոսում Ձեր հայ-վրացական ընտանիքի մասին:***

- Այո, քանի որ հայ-վրացական մեր ընտանիքում ազգային սահմանազատում չունենք: Ինձ, դստերս, լուսահոգի ամուսնուս հետ ազատ հայերեն խոսում էին եւ խոսում են վրացի փեսաս, թոռս, հարսս: Նույնիսկ 6-ամյա ծոռս՝ Դենիենը, նույնպես հայերեն է խոսում: Հայերենն ու վրացերենը հավասարապես գործածական են մեր տանը: Վրաստանի հանդեպ սերը ինձ ներարկել է՝ Թուրքիային սահմանամերձ հայկական գյուղից Թիֆլիս ներգաղթած հայրս. նա միշտ օրհնում էր իրեն ապաստան տված այս ժողովրդին եւ այս երկինքը մեզ հարազատ էր համարում: Հայն ու վրացին մշտապես կարողացել են միաբանված լինել, միասին ապրել, եւ դա, երեւի, բխում է նրանց խաղաղասեր ու մարդասեր ոգու ընդհանրությունից:

***- Ի՞նչ կուզենայիք ավելացնել ասվածին:***

- Մեծ սիրով շնորհավորում եմ «Վրաստան» թերթի երկարամյա խմբագիր, ճանաչված հասարակական եւ քաղաքական գործիչ Վան Բայբուրթյանին՝ Վրաստանի պատվավոր քաղաքացու կոչման առիթով:

Ուշացումով, ուզում եմ շնորհավորել նաեւ Վրաստանի 100-ամյակը: Մեր բոլորիս բարեկամ, մեր հարազատ «Վրաստան», դու պատվով ես կատարում հայ ու վրաց ժողովուրդների միասնության ամրապնդման, ազգապահպանության, երիտասարդության դաստիարակության գործում ստանձնած քո կարեւոր առաքելությունը, շնորհակալություն եւ անխափան երթ քեզ:

*Զրուցեց ՋՈՒԼԻԵՏԱ ԲԱԴԱԼՅԱՆԸ*

ԳԻՏԱԺՈՂՈՎ

# ՀԱՆՐԱՀԱՅՏ ԲԵՄԱԴՐԻՉ ՌՈԲԻԿՈ ՍՏՈՒՐՈՒԱՆ՝ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՇԵՔՍՊԻՐՅԱՆ 4-ՐԴ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՀՅՈՒՐ

*Հոկտեմբերի 6-8-ին, Երեւանում անցկացվեց «Շեքսպիրի երկերում ուժի, իշխանության ու բռնության մեկնությունները՝ XXI դարի աշխարհաքաղաքական դիտանկյունից» խորագրով Շեքսպիրյան 4-րդ միջազգային գիտաժողովը, որին մասնակցեցին հայ եւ օտարազգի շեքսպիրագետներ, թարգմանիչներ, թատերագետներ, ռեժիսորներ, դերասաններ աշխարհի տարբեր երկրներից:*

Բացման հանդիսավոր արարողությանը, որը տեղի ունեցավ հոկտեմբերի 6-ին, Երեւանի կամերային թատրոնում, որպես պատվավոր հյուր ներկա էր Թբիլիսիի Շոթա Ռուսթավելու անվան պետական ակադեմիական թատրոնի գեղարվեստական ղեկավար, աշխարհահռչակ բեմադրիչ Ռոբերտ (Ռոբիկո) Ստուրուան: Հանրաճանաչ ռեժիսորը բեմադրել է Շեքսպիրի ավելի քան 22 թատերգություններ տարբեր երկրներում:

Հիշեցնենք, որ Ռոբիկո Ստուրուան բազմիցս եղել է Հայաստանում, թատերական տարբեր բեմերում դիտել ու արժանվորեն գնահատել հայ ռեժիսորների շեքսպիրյան ներկայացումները: Այս անգամ եւս իր ելույթում Ստուրուան շեշտեց, որ շատ է սիրում Հայաստանը ու, եթե կրկին հրավիրեն, ապա սիրով կգա:




Գիտաժողովի շրջանակում՝ զեկույցներով հանդես եկան շեքսպիրագետներ եւ թատերական գործիչներ Կանադայից, Ռուսաստանից, Լեհաստանից, Մեծ Բրիտանիայից եւ Հայաստանից: Անցկացվեց նաեւ հայ շեքսպիրյան միության 3-րդ գիտաժողովի գրքի շնորհանդեսը:

Գիտաժողովի վերջին ելույթը նվիրված էր հայ տաղանդավոր թարգմանիչ եւ բանաստեղծ Սամվել Մկրտչյանին: Սամվել Մկրտչյանի ստեղծագործությունների զեկուցմանը մասնակցեց նրա այրին՝ ճանաչված քաղաքական գործիչ եւ լրագրող Նաիրա Զոհրաբյանը:

*ԱՐԵՎԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ*

# ՀԱՐՑ - ՊԱՏԱՍԽԱՆ ✵ ԱՅԼԱԶԱՆ ✵ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

ԳԻՏԵ՞Ք, ԱՐԴՅՈՔ...

## ՅԵՏԵՎԵՔ ՄՏՔԻ ԷՆԵՐԳԻԱՅԻՆ



***Անկեղծ ասած, չէի հավատում, երբ մեծերն ասում էին՝ վատի մասին մի մտածիր, դա կարող է իրականանալ: Վերջերս այս նախազգուշացումն իր հաստատումը գտավ իմ կյանքում: Այդուհանդերձ, մի՞թե հնարավոր է, որ մտքով անցածը իրականություն դառնա:***

***Վ.Բարսեղյան***
***Ախալքալաքի***

Որքան էլ զարմանալի լինի, դա փաստ է: Ճիշտ է, մտքի էներգիան դեռեւս հնարավոր չէ չափել սարքերով, սակայն կան բազմաթիվ կողմնակի ապացույցներ՝ մտքի նյութականության վերաբերյալ: Միտքը կարող է ստեղծել եւ ոչնչացնել: Այն ամենը, ինչ ստեղծվել է մարդու կողմից, նախ եղել է միտք ու նախագիծ: Այսօրվա միտքը վաղվա արարքն է:

Միտքն օգնում է օրգանիզմում էներգիայի շրջանառությանը, հատկապես՝ զգացմունքներով հարուստ միտքը: Յիշեք, թե ինչպես էր ներսում եռում էներգիան, երբ դուք սիրահարված էիք եւ ինչպես էիք ճնշվում անհաջողությունների ժամանակ: Յիշեք պահեր, երբ վախի ազդեցությամբ կատարել եք գործողություններ, որոնք անհնար են թվում:

Բազմակի կրկնվող մտքերն աստիճանաբար ամրապնդվում են ենթագիտակցությունում եւ սկսում մշտապես ազդել օրգանիզմի վրա: Ահա թե ինչու, մտքերի վերահսկողությունը մեծ նշանակություն ունի մեր առողջության համար:

Բացասական մտքերն առաջացնում են բացասական հույզեր, որոնք դառնում են մեր օրգանիզմում գործող սթրեսներ: Դա կարող է հանգեցնել բջիջների քայքայման:

Ահա թե ինչու է անհրաժեշտ հետեւել մեր մտքերին: Պետք է հիշել, որ մտքերը նյութական են: Ինչ մտածում ենք այսօր, կատարում ենք վաղը: Այս պահի մտքերը մեր հաջորդ գործողությունների սկիզբն են:

ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ

## ԻՆՉՊԵ՞Ս ՍՏԱՆԱԼ ԶԵՆՔ ԿՐԵԼՈՒ ՕՐԻՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ



***Ներկա դրությամբ շատերն են ցանկանում՝ ապահովության համար բնակարանում ունենալ հրազեն: Ի՞նչ պետք է անել, որպեսզի օրինականորեն կարողանանք ստանալ հրազեն պահելու, կրելու իրավունքը:***

***Կ.Սիմոնյան***

***Թբիլիսի***

Նախ ասենք, որ հրազեն ձեռք բերելու, պահելու կամ կրելու համար դեռեւս 2015 թվականի նոյեմբերի 1-ից Վրաստանում անցկացվում է զենք կրելու կանոնների իմացության տեսական քննություն: Քննության տոմսերը կազմվում են Վրաստանի օրենսդրության համաձայն:

Վրաստանի քաղաքացին զենք կրել եւ զենքն օրինականացնել կարող է միայն տեսական քննական թեստը հաջողությամբ հաղթահարելու դեպքում: Վրաստանի ներքին գործերի նախարարության (ՆԳՆ) սպասարկման գործակալությունում կա զենք կրելու երեք տեսակի քննություն.

* կարճափող հրազենի եւ գազային զենքեր կրելու քննություն,

* սպորտային հրազեն կրելու քննություն,

* որսորդական հրազեն կրելու քննություն:

Յուրաքանչյուր տեսական քննություն բաղկացած է 15 հարցից, 13 ճիշտ պատասխանի դեպքում քննությունը համարվում է հաղթահարված: Տեսական թեստը հանձնելու համար քննվողներին տրվում է 20 րոպե:

Տեսական քննությանը մասնակցելու համար՝ քաղաքացին պետք է ներկայացնի.

* հաշվետվություն հոգեկան առողջական վիճակի մասին (փսիխո),

* անձը հաստատող փաստաթուղթ,

* քննության գրանցված վճարը հաստատող անդորրագիր:

Յուրաքանչյուր տեսակի զենքի տեսական քննության գրանցման վճարը կազմում է 20 լարի:

Նշենք, որ հրազենի ձեռքբերման ամենադյուրացված ընթացակարգը ԱՄՆ-ում է, որի արդյունքում երկրի բնակչության ձեռքին, վերջին տվյալներով, գտնվում է գրեթե 4 միլիարդ միավոր հրազեն:

ՀԵՏԱՔՐՔԻՐ Է...

# ՓՈՂԸ ԵՎ ԴՐԱ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

### ՀԵՏԱՔՐՔԻՐ ԵՎ ՔԻՉ ՀԱՅՏՆԻ ՓԱՍՏԵՐ ՓՈՂԻ ՄԱՍԻՆ

***Ոմանց համար փողը կյանքի նպատակ է, ոմանց համար էլ՝ գոյության միջոց, սակայն բոլոր դեպքերում փողն անհրաժեշտություն է: Մենք բոլորս մեր դրամապանակներում պահում ենք թղթադրամներ գնումներ կատարելու համար, ինչպես նաեւ մեր գումարների ինչ-որ մասը խնայում ենք բանկային հաշիվներում: Պարզվում է, որ, շփվելով փողի հետ ամեն օր, մենք տեղյակ ենք փողի մասին ոչ բոլոր հետաքրքիր փաստերին:***



Մարդկության մեծագույն հայտնագործություններից մեկը հանդիսանում է փողը: Ինչպես արդեն գիտենք, փողը շատ կարեւոր դեր ունի մարդկային հասարակության զարգացման գործում: Փողը լայն հասկացություն է, այդ պատճառով էլ տարբեր տնտեսագետներ տվել են տարբեր սահմանումներ, սակայն փողը հնարավոր չէ մեկ սահմանումով ամբողջովին բնորոշել: Բոլոր քաղաքակրթություններում ապրանքն իրացվում է փողով, իսկ ստացված գումարով գնվում է մեկ այլ ապրանք, որն անհրաժեշտ է արտադրության կազմակերպման կամ անձնական սպառման համար:

Փողին ներկայացվում են մի շարք պահանջներ, որոնց սկզբնական շրջանում բավարարում էր ոսկին, իսկ այնուհետեւ՝ թղթադրամները:

Փողի էությունն ավելի վառ ձեւով դրսեւորվում է նրա կատարած գործառույթների միջոցով: Մասնավորապես՝ արժեքի չափման, շրջանառության միջոցի, կուտակման եւ գանձագոյացման, վճարման միջոցի, համաշխարհային փողի գործառույթով:

Իսկ ինչ վերաբերում է փողի մասին հետաքրքիր եւ քիչ հայտնի փաստերին, ապա, հին ժամանակներում, որպես փող մարդիկ օգտագործել են ոչ միայն կենդանիներին եւ տարաբնույթ ապրանքները, այլեւ՝ արյունը:

Յին հռոմեացիները՝ որպես գումար օգտագործել են աղը (salt): «Salary» (աշխատավարձ) եզրի հիմքում «sal» արմատն է, որը լատիներենում նշանակում է «salt»՝ աղ:

Բրիտանական ֆունտն ամենահին արժույթն է, որ դեռեւս գործածության մեջ է գտնվում:

Աշխարհում օգտագործվում է ավելի քան 170 տարբեր արժույթ:

Թղթադրամը իրականում թուղթ չէ, այլ կազմված է բամբակից եւ տարաբնույթ մանրաթելերից:

Առաջին բանկոմատի գաղափարը ծնվել է Լոզասենյակում, 1960-ական թվականներին: Գաղափարի հեղինակը գյուտարար Ջոն Շեֆերդ Բարոնն է:

Թղթադրամը պարունակում է բավական շատ վիրուսներ: Ավելին, ԱՄՆ-ում շրջանառվող դոլարների 90 տոկոսի վրա կան թմրամիջոցների հետքեր:

Աշխարհում ամենամեծ շրջանառությունը բաժին է ընկնում դոլարին: Մյուս առավել հաճախ շրջանառվող արժույթներն են եվրոն, ճապոնական յենը եւ բրիտանական ֆունտ ստերլինգը:

Որոշ հետաքրքիր փաստեր ԱՄՆ դոլարի մասին.

Կանաչ գույնն ընտրվել է դոլարի համար, քանի որ այն ամենակայունն է՝ խամրելու եւ գունաթափման դեպքում:

ԱՄՆ-ում շրջանառվում է ավելի շատ վճարային քարտեր, քան երկրում ապրող մարդկանց թիվն է:

ԱՄՆ նախագահները չեն կարող իրենց կենդանության օրոք հայտնվել մետաղադրամների կամ թղթադրամների վրա: Դա արգելված է 18-րդ դարում ընդունված օրինագծով:

Մարթա Վաշինգտոնը եղել է միակ ամերիկուհին, որի նկարը հայտնվել է ամերիկյան թղթադրամի վրա:

ԱՄՆ-ում թղթադրամների կյանքի տեւողությունը մինչեւ 8 տարի է:

ԱՄՆ-ից դուրս շրջանառվում է ավելի շատ դոլար, քան ԱՄՆ-ի ներսում:

Եթե ԱՄՆ-ում թղթադրամները փոխարինվեն մետաղադրամներով, երկիրը կարող է տնտեսել մեծ գումարներ, մասնավորապես, շուրջ 5.5 մլրդ ԱՄՆ դոլար՝ 30 տարվա ընթացքում:

Եվ ամենավերջին փաստը. հետազոտությունները պարզել են, որ փողի պատճառով ծագած վեճերն ամուսնալուծությունների գլխավոր պատճառն են:

## ԱՆԵԿԴՈՏՆԵՐ

*☺ Մանկապարտեզում երեխաներին հարցնում են, թե որտեղի՞ց են նրանք հայտնվել.*

*- Ինձ արագիլն է բերել:*

*- Ինձ ու քրոջս գնել են խանութից:*

*- Մենք հարուստ չենք, այնպես որ, ամեն ինչ պապան է արել:*

*☺ Յանդիպում են երկու ծանոթներ.*

*- Ի՞նչ ես կարծում, ամենամեծ արկածախնդիրը ո՞վ է:*

*- Չգիտեմ:*

*- Կոմպոզիտոր Մենդելսոնը: Յազարավոր հիմարների համար գրեց «Յարսանեկան քայլերգ», իսկ ինքը ողջ կյանքում այդպես էլ չամուսնացավ:*

*☺ Յարցնում են ամուսնուն.*

*- Ձեր կնոջ հետ ամուսնության պայմանագիր ստորագրե՞լ եք:*

*- Չէ, քուր ջան, մենք միմյանց վրա չհարձակվելու պայմանագիր ունենք:*

*☺ Գոյություն ունի երկու պատճառ, թե ինչո՞ւ մարդկանց չենք հավատում: Առաջինը՝ նրանց շատ լավ ճանաչում ենք, եւ երկրորդը՝ նրանց ընդհանրապես չենք ճանաչում:*

*☺ Երկու ոստիկան գնում են զինված հանցագործին ձերբակալելու: Մեկը՝ մյուսին.*

*- Առաջինը դու ներս մտիր, ցավդ տանեմ, հետո՝ քո վրեժը ես կլուծեմ:*

## «ՎՐԱՍՏԱՆ» ԹԵՐԹԻ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻ ԹԵՎԱՎՈՐ ՄՏՔԵՐ



*❒ Բացատրվել կարելի է նրանց հետ, ովքեր խոսում են ուրիշ լեզվով, բայց ոչ նրանց հետ, ովքեր նույն բառերի մեջ բոլորովին այլ իմաստ են դնում:*

***Ռ.Մուրադյան***
***Բաթումի***

*❒ Մարդկանց նախատելու իրավունք ունենալու եւ ապա նրանց ուղղելու համար, նախեւառաջ, պետք է սիրել մարդկությունը:*

***Ա.Յարությունյան***
***Ախալքալաքիի մունիցիպալիտետ, գ. Դիլիսկա***

*❒ Երջանիկ չէ նա, ով այդպիսին է թվում ինչ-որ մեկի, այլ նա, ով իրեն զգում է այդպիսին:*

***Ս.Պապիկյան***
***Ախալցիխեի մունիցիպալիտետ, գ.Ծղալթբիլա***

*❒ Դժվար է հավատալ, որ մարդը ձեզ ճշմարիտն է ասում, երբ գիտեք, որ դուք նրա տեղը կստեիք:*

***Յ.Գալստյան***
***Թեթրիծղարոյի մունիցիպալիտետ, գ. Սամշվիլդե***

*❒ Ծուլությունը մեր այն արատներից է, որի հետ մենք հաշտվում ենք ամենից հեշտ:*

***Լ.Չատոյան***
***Թելավի***

# ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏԸ ՊՐԱՀԱՅՈՒՄ ՄԱՍՆԱԿՑԵՑ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԱԳԱԹԱԺՈՂՈՎԻՆ

*Միջոցառումը, որին մասնակցում էին չորս տասնյակից ավելի պետությունների առաջնորդներ՝ ԵՄ անդամ, ինչպես նաեւ ԵՄ գործընկեր երկրների ղեկավարներ, անցկացվեց Պրահայի հին ամրոցում:*

Գագաթաժողովի շրջանակներում՝ Հայաստանի վարչապետը մասնակցեց անվտանգության թեմայով կլոր-սեղան քննարկմանը:

Պրահայում Նիկոլ Փաշինյանը, Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնի եւ Եվրախորհրդի նախագահ Շառլ Միշելի մասնակցությամբ, Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւի հետ քառակողմ հանդիպումից բացի, հանդիպումներ եւ զրույցներ ունեցավ Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանի, Գերմանիայի կանցլեր Օլաֆ Շոլցի, Հունաստանի վարչապետ Կիրիակոս Միցոտակիսի հետ:

Հատկանշական է, որ Պրահայում բացի վերոնշյալ հանդիպումներից, Նիկոլ Փաշինյանը միաժամանակ հանդիպեց Իլհամ Ալիեւի եւ Ռեջեփ Թայիփ Էրդողանի հետ: Ընդ որում, Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնն ավելի ուշ միացել է երեք երկրների ղեկավարներին:

Փաշինյան-Էրդողան հանդիպմանը Հայաստան-Թուրքիա կարգավորման համատեքստում երկուստեք կարեւորվեց ուղիղ շփումներն ու բարձր մակարդակի հանդիպումները:

Նիկոլ Փաշինյանը եւ Ռեջեփ Թայիփ Էրդողանը քննարկեցին Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման գործընթացն ու այդ ուղղությամբ հետագա հնարավոր քայլերը:

Շեշտվեց երկու երկրների հատուկ ներկայացուցիչների քննարկումների արդյունքում ձեռք բերված պայմանավորվածությունների շուտափույթ իրականացման անհրաժեշտությունը: Մասնավորապես, խոսքը վերաբերում է երրորդ երկրների քաղաքացիների համար ցամաքային սահմանի բացմանը, Հայաստան-Թուրքիա ուղիղ օդային բեռնափոխադրումների իրականացմանը:

Մտքեր փոխանակվեցին նաեւ տարածաշրջանային գործընթացների շուրջ:

## ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆ. «ՀԱՊԿ-ՈՒՄ ԿԱՐԾԻՔ ԿԱ, ՈՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՐԾՆՈՒՄ Է ՀԱՅԱՍՏԱՆԸ, ԻՍԿ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՆՀԱՆԳՍՏԱՆՈՒՄ ԵՆ, ՈՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՌԱՆՈՒՄ Է ՀԱՅԱՍՏԱՆԻՑ»

*Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը, Հայաստանի հանրային հեռարձակողին տված հարցազրույցում, անդրադառնալով ՀԱՊԿ-ի անդամության հարցին, հայտարարեց, որ «Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպությունում» կարծիք կա, որ կազմակերպությունը կորցնում է Հայաստանը, եւ ես պատասխանեցի. Հայաստանն անհանգստացած է, որ կազմակերպությունը հեռանում է Հայաստանից:*

Ըստ Հայաստանի կառավարության ղեկավարի, երբ գործընկերների հետ քննարկվում էր Հայաստանի անվտանգության հարցը, երկիրը հստակ երաշխիքներ ստացավ, որ Հայաստանի սահմանը կարմիր գիծ է «Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության» համար, սակայն, երբ Երեւանը դիմեց կազմակերպությանը օգնության համար, տարօրինակ պատասխան է ստացել, որ սահմանի սահմանագծում եւ սահմանազատում չկա:

- Հարց առաջացավ՝ որտե՞ղ է կարմիր գիծը: Հետո՝ մենք հստակ հաստատեցինք այս հարցի հստակ պատասխանի անհրաժեշտությունը, դա կարեւոր է ոչ միայն Հայաստանի, այլ նաեւ «Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության» համար,- ասաց Նիկոլ Փաշինյանը:

## ՄԵԿՆԱՐԿԵԼ Է «ՍՓՅՈՒՌՔԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԴԵՍՊԱՆ» ԾՐԱԳԻՐԸ



*16 երկրներից շուրջ 20 սփյուռքահայ երիտասարդներ, մի քանի օր է «Սփյուռքի երիտասարդ դեսպան» ծրագրի շրջանակներում, արդեն Հայաստանում են:*

Ստեղծված է հնարավորություն, ծանոթանալու Հայաստանի տարբեր բնագավառներին, մարզերում առկա խնդիրներին եւ սերտ կապեր հաստատելու Հայաստանի եւ իրենց համայնքների միջեւ: Ծրագրի հիմքում առաջին հերթին համայնքների միջեւ կապերի ակտիվացումն է:

«Սփյուռքի երիտասարդ դեսպան» ծրագիրը մեկնարկել է 2021-ից, որին դիմել էին 104 սփյուռքահայ երիտասարդներ: Նրանցից ընտրվել են 20 մասնակիցներ՝ 16 երկրներից: Այս տարի ծրագիրը մեկնարկել է սեպտեմբերի 25-ին եւ կավարտվի հոկտեմբերի 8-ին:

## ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԵՆՈՎ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

*Հայաստանի ԿԳՄՍ փոխնախարարներ Արթուր Մարտիրոսյանի եւ Ժաննա Անդրեասյանի եւ «Գալուստ Գյուլբենկյան» հիմնադրամի հայկական համայնքների բաժանմունքի տնօրեն Ռազմիկ Փանոսյանի եւ տնօրենի օգնական Շողեր Մարկոսյանի հանդիպմանը կողմերը քննարկել են Հայաստանում արեւմտահայերենի դասավանդմանը, տարածմանը վերաբերող եւ սփյուռքի հայկական կրթօջախներին առնչվող խնդիրները:*



Նախանշվել են ուսուցիչների վերապատրաստման, արեւմտահայերենի դասավանդման մեթոդական նյութերի պատրաստման նպատակով ջանքերի միավորման հեռանկարները:

Հանդիպմանը քննարկվել են արեւմտահայերենի թվայնացման, դպրոցականների ներգրավմամբ արեւմտահայերենով տարբեր հարթակների, կայքերի պատրաստման հեռանկարները: Կողմերն անդրադարձել են նաեւ հայագիտության խրախուսմանն ու զարգացմանը միտված համատեղ ծրագրերի մշակմանը:

## ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԱՄԱՌԱՅԻՆ 8-ՐԴ ԽԱՂԵՐԸ ԿԱՆՑԿԱՑՎԵՆ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻՆ

### ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԽԱՂԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵԻ ՆԻՍՏԻՆ ՄԱՍՆԱԿՑԵՑ ԿՈՄԻՏԵԻ ԱՆԴԱՄ, ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԽԱՂԵՐԻ ԹԲԻԼԻՍՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆԸ



*Սեպտեմբերի 29-ին, Հայաստանի կառավարության կայացած նիստում, հավանության է արժանացել Համահայկական ամառային 8-րդ խաղերի կազմակերպման եւ անցկացման կազմկոմիտե ստեղծելու եւ դրա անհատական կազմը հաստատելու մասին որոշման նախագիծը:*

Տարածած հաղորդագրությունից, Համահայկական ամառային 8-րդ խաղերը կանցկացվեն 2023 թվականի օգոստոսին:

Խաղերը պատշաճ ու բարձր մակարդակով կազմակերպելու եւ անցկացնելու նպատակով ստեղծվել է կազմկոմիտե, որի նախագահը Հայաստանի վարչապետի աշխատակազմի ղեկավար Արայիկ Հարությունյանն է: Կազմկոմիտեի կազմում ընդգրկվել են նաեւ ՀՀ կրթության գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Վահրամ Դումանյանը եւ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Կարեն Գիլոյանը:

Համահայկական ամառային 8-րդ խաղերի բացման հանդիսավոր արարողությունը կկազմակերպվի Գյումրիում, իսկ խաղերը կանցկացվեն Շիրակի ու Արագածոտնի մարզերի մի շարք քաղաքներում: Փակման արարողությունը տեղի կունենա Երեւանում:

Գյումրին 8-րդ խաղերի բացման արարողության մայրաքաղաք է ընտրվել Համահայկական խաղերի համաշխարհային կոմիտեի գործադիր մարմնի միաձայն որոշմամբ: 17 մարզաձեւերի համար խաղարկվելու է 107 հավաքածու մեդալ՝ ոսկե, արծաթե եւ բրոնզե:

Համահայկական խաղերի համաշխարհային գործադիր կոմիտեի նիստին մասնակցեց կոմիտեի անդամ, Համահայկական խաղերի թբիլիսյան կոմիտեի նախագահ Վան Բայբուրթյանը:

## ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԸ՝ ԱՊՀ ԵՐԿՐՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՈՉ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՄԱՆԸ



*Հոկտեմբերի 7-ին, աշխատանքային այցի շրջանակներում, Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը Սանկտ Պետերբուրգում մասնակցեց ԱՊՀ երկրների ղեկավարների ոչ պաշտոնական հանդիպմանը:*

*Միջոցառմանը մասնակցել են նաեւ ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինը, Բելառուսի նախագահ Ալեքսանդր Լուկաշենկոն, Ղազախստանի նախագահ Կասիմ-Ժոմարտ Տոկաեւը, Տաջիկստանի նախագահ Էմոմալի Ռահմոնը, Թուրքմենստանի նախագահ Սերդար Բերդիմուհամեդովը, Ուզբեկստանի նախագահ Շավքաթ Միրզիյոեւը, Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւը:*

*ՌԴ նախագահը շնորհակալություն է հայտնել ԱՊՀ երկրների ղեկավարներին Սանկտ Պետերբուրգ ժամանելու համար եւ նշել, որ ոչ պաշտոնական հանդիպմանը հնարավորություն կունենան քննարկել հաջորդ շաբաթ Աստանայում կայանալիք ԱՊՀ գագաթաժողովում քննարկվելիք հարցերն ու թեմաները:*

## ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՄՇԱԿՈՒՄԸ՝ ԵՌԱԿՈՂՄ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԱՌԱՐԿԱ

*Հայաստանի եւ Ադրբեջանի արտաքին գործերի նախարարները, ԱՄՆ պետքարտուղարի հետ միասին, խոսել են խաղաղության համաձայնագրի մշակման մասին: Բանակցությունների նախաձեռնողը եղել է ԱՄՆ Պետդեպարտամենտը: Զրույցի ընթացքում դիվանագետները ներկայացրել են իրենց տեսակետները՝ հոկտեմբերի 2-ին Ժնեւում կայացած հանդիպման արդյունքների վերաբերյալ:*

*Էնթոնի Բլինքենն իր հերթին շնորհակալություն է հայտնել այն դրական քայլերի համար, որ Հայաստանն ու Ադրբեջանը ձեռնարկում են կայուն խաղաղության համաձայնագրի հասնելու համար:*

## ԱՄՆ-Ի ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅԱՄԲ ԱԶԱՏ ԵՆ ԱՐՁԱԿՎԵԼ 17 ՀԱՅ ՌԱԶՄԱԳԵՐԻՆԵՐ

*Հոկտեմբերի 4-ին ադրբեջանական կողմը, ԱՄՆ միջնորդությամբ, հայկական կողմին է վերադարձրել 17 հայ ռազմագերիների: Տասնյոթ հայ ռազմագերիների վերադարձը Հայաստան սեպտեմբերի 27-ին, ԱՄՆ նախագահ Ջո Բայդենի Ազգային անվտանգության հարցերով խորհրդական Ջեյք Սալիվանի նախաձեռնությամբ տեղի ունեցած եռակողմ հանդիպման պայմանավորվածության արդյունքն է:*

*Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը, 17 հայ ռազմագերիներին ԱՄՆ միջնորդությամբ հայկական կողմին վերադարձնելու առիթով, թվիթերյան իր միկրոբլոգում գրառում է կատարել:*

*«Բարձր եմ գնահատում մեր 17 ռազմագերիների վերադարձին աջակցելու ԱՄՆ ջանքերը: Հուսով եմ՝ մեր միջազգային գործընկերների հետ համատեղ ջանքերով հետագա առաջընթաց կարձանագրենք ինչպես հումանիտար խնդիրների լուծման, այնպես էլ՝ տարածաշրջանում խաղաղության հաստատման գործում»,- գրել է Նիկոլ Փաշինյանը:*

## ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

### ՀՈԿՏԵՄԲԵՐ



*10.10.2022 Աղվանքի Սուրբ Գրիգորիս կաթողիկոսի նշխարների գտնվելու, Իննակյա վանքում նահատակված Թաթուլ, Վարոս, Թումաս, Անտոն եւ Կրոնիդես Սուրբ հայրերի եւ յոթ խոտաճարակների հիշատակության օր*

*11.10.2022 Սուրբ առաքյալներ Անանիայի, Մատաթիայի, Բառնաբասի, Փիլիպպոսի, Հովհաննեսի եւ Շիղայի՝ Սիղվանոսի հիշատակության օր*

*15.10.2022 Սուրբ Մատթեոս, Մարկոս, Ղուկաս եւ Հովհաննես Ավետարանիչների հիշատակի տոն*

*Մատթեոսը Տիրոջ 12 առաքյալներից է, առաջին Ավետարանի հեղինակը:*

*Սբ. Մարկոս Ավետարանիչը ամենակարճ Ավետարանի հեղինակն է:*

*Սբ. Ղուկաս Ավետարանիչը երրորդ ավետարանի հեղինակն է:*

*Սբ. Հովհաննես առաքյալը Դ Ավետարանի, երեք ընդհանրական նամակների եւ «Հայտնության» գրքի հեղինակն է: Հիսուս նրան համարել է՝ «սիրելի աշակերտ»:*

## ԹԵԺ ԳԻԾ

### ԲՈԼՈՐԻՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀԵՌԱԽՈՍԱՀԱՄԱՐՆԵՐ

*Շտապ բժշկական օգնություն* - **112**
*Պարեկային ոստիկանություն* - **112**
*Հրշեջ-փրկարար ծառայություն* - **112**
*Պահակային ոստիկանություն* - **125**
*Գլխավոր տեսչություն* - **126**
*Տեղեկատու բյուրո* - **118 08**
*Քաղաքապետարանի թեժ գիծ* - **272-22-22**
*Առողջապահության նախարարության թեժ գիծ* - **15-05**
*Ժողովրդական պաշտպան* - **299-58-98, 292-24-79**
*Մարդու իրավունքների պաշտպանության կենտրոն* - **1481**
*«Թբիլիսի էներջի»-ի տեղեկատվական ծառայություն* - **114, 240-40-04**
*«Վարկեթիլաիրի»-ի տեղեկատվական ծառայություն* - **227-50-40**
*ԹԵԼՄԻԿՈ-ի թեժ գիծ* - **16 700, (+995 32),** 5 000 777
*Ջրամատակարարման թեժ գիծ* - **293-11-11**
*Կոյուղու վթարային ծառայության թեժ գիծ* - **(593) 50-42-52**
*Օդանավակայանի տեղեկատվական բյուրո* - **231-03-41, 231-04-21**
*Երկաթուղային կայարան* - **1331, 2199010**
*Դիդուբեի «Օկրիբա» ավտոկայարան* - **(599) 74-73-73**

## ՏՐԱՆՍՊՈՐՏ

# ԵՐԿՐԻՑ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲՈԼՈՐ ԹՌԻՉՔՆԵՐԸ ԿԻՐԱԿԱՆԱՑՎԵՆ ԹԲԻԼԻՍԻԻ ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆԻՑ

### ՔՈՒԹԱՅԻՍԻԻ ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆԸ ՓԱԿՎՈՒՄ Է ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ

*Հոկտեմբերի 10-ից Քութայիսիի միջազգային օդանավակայանը երկու շաբաթով կփակվի՝ թռիչքուղու նորոգման նպատակով: Օդանավակայանների միության ղեկավար Թամար Արչուաձեի խոսքով՝ ուղեւորներն այս ընթացքում կօգտվեն Թբիլիսիի օդանավակայանից:*



- Երկշաբաթյա աշխատանքների ավարտից հետո, աշխատանքները կշարունակվեն շաբաթական 2 օր՝ 12 ժամով փակելու պայմանով՝ ինչը կախված կլինի նրանից, թենայած թե՝ որքանով կհաջողվի աշխատանքն ամբողջությամբ ավարտել այդ երկու շաբաթվա ընթացքում:

Քութայիսիի օդանավակայանից անցկացվելիք թռիչքները կիրականացվեն Թբիլիսիի օդանավակայանից: Մեր աշխատակիցները նույնպես կժամանեն Թբիլիսիի օդանավակայան, որպեսզի օգնեն օդանավակայանին՝ հաջողությամբ իրականացնել այս երկշաբաթյա ուղեւորափոխադրումները,- ասաց Թամար Արչուաձեն:

## ՖՈՒՏԲՈԼ

### ԷԴԳԱՐ ՂԱԶԱՐՅԱՆԸ՝ ՎՐԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՍԻՐՈՂԱԿԱՆ ԼԻԳԱՅԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՌՄԲԱՐԿՈՒ



Վրաստանի ֆուտբոլի սիրողական լիգայի Թբիլիսիի «Բասա» թիմի հարձակվող Էդգար Ղազարյանը չորրորդ անգամ ճանաչվել է լիգայի լավագույն ռմբարկու:

35-ամյա թբիլիսցի Էդգար Ղազարյանը ժամանակին ավարտել է «Շեւարդենի» ֆուտբոլի ակադեմիան: Որպես պրոֆեսիոնալ հանդես է եկել Թբիլիսիի «Վիտ Ջորջիա», «Մերանի» ակումբներում, Երեւանի «Ուլիսում» եւ Լիտվայի «Շաուլյայում»:

Արդեն չորրորդ տարին է, ինչ Էդգար Ղազարյանը, հրաժեշտ տալով պրոֆեսիոնալ ֆուտբոլին, հանդես է գալիս Վրաստանի ֆուտբոլի սիրողական լիգայում, որտեղ նրա խաղընկերներն են վրաց ֆուտբոլի այնպիսի ճանաչված աստղեր, ինչպիսիք են Կախա Կալաձեն, Լեւան Կոբիաշվիլին, Ալեքսանդր Իաշվիլին, ուրիշներ:

Նշենք, որ, սիրողական լիգայում չորս մրցաշրջանների մասնակցության արդյունքում, Էդգար Ղազարյանը դարձել է լավագույն ռմբարկու եւ լավագույն հարձակվող:

Ավելացնենք, որ Էդգար Ղազարյանը Թբիլիսիի ֆուտբոլի հավաքականի կազմում մասնակցել է համահայկական բոլոր 7 խաղերի ֆուտբոլի մրցաշարերին:

Սամցխե-Ջավախեթիի նահանգապետարանը, Ախալքալաքիի մունիցիպալիտետի քաղաքապետարանն ու սակրեբուլոն, «Վրաստան» թերթի խմբագրությունը, Թբիլիսիի Պետրոս Ադամյանի անվան պետական հայկական դրամատիկական թատրոնը ցավակցում են սակրեբուլոյի փոխնախագահ, Վրաստանի խորհրդարանի երկու գումարումների պատգամավոր Համլետ Մովսիսյանին, սիրելի մոր՝

***Վեներա Սարգսի ՄՈՎՍԻՍՅԱՆԻ***

մահվան կապակցությամբ եւ վշտակցում են հարազատներին, բարեկամներին ու մերձավորներին:



Վրաստանի հայ գրողների «Վերնատուն» միությունը, «Վրաստան» թերթի խմբագրությունը խորապես վշտացած են «Վերնատուն» միության անդամ Ստանիսլավ Մելքոնյանի կնոջ՝

***Ծովինար Արմենակի ՄԵԼՔՈՆՅԱՆԻ***

մահվան կապակցությամբ եւ ցավակցում են հանգուցյալի հարազատներին ու մերձավորներին:

## ԽԱՉԲԱՌ



***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 6.Մեծ ասեղ: 8.Խնկի պես անուշահոտ խեժ: 10.Ծաղիկների «թագուհին»: 11.Հացահատիկը կալսելու տեղ: 13.Նեղ անցք լեռների միջեւ: 14.Նոր տարի: 16.Հենաշարժիչ համակարգի ակտիվ մաս: 17.Փնջավոր գլխարկ: 19.Վարակիչ հիվանդություն: 21.Ֆրանսիացի դերասան Ժան ...: 22.Մեքենայի ընթացքի ուղղությունը կարգավորելու հարմարանք: 23.Զամբյուղ, կողով: 27.Կնոջ հայրը: 29.Թխվածքաբլիթ: 32.Հողի փխրեցում: 33.Հոր: 35.Ծերենցի պատմական վեպերից՝ Երկունք Թ ...: 36.Հիսուս Քրիստոսի երկնային հայրը: 37.Համազարկային կրակի ռեակտիվ համակարգ: 39.Հարցական դերանուն: 42.Թագավոր: 44.Ծնունդով վրաստանցի հայ գուսան: 46.Կոչնակ, հնչակ: 49.ԽՍՀՄ ԶՈՒ հայազգի հրամանատար՝ Հայկ Բժշկյանց: 50.«Կենաց-... պայքար»: 53.Վրաստանի դրամական միավորը: 54.Տգեղ: 55.Խոնավ օդից գոյացող ջրի կաթիլներ, որոնք նստում են հողի վրա: 56.Վրաստանի ազգային հերոս ... Մաղաշվիլի: 57.Նոտա: 58.Միայն թե: 59.Ցանկություն, տենչ: 60.Քաղաք Ֆրանսիայում: 61.Հնագույն բանաստեղծություն:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 1.Արցախ: 2.Ազդակ, գործոն: 3.Խթան, դրդիչ միջոց: 4.Ստեղծագործող ու կատարող արվեստագետ՝ հին եւ միջնադարյան Հայաստանում: 5.Դեղահաբ: 7.Էշ: 9.Ինքնաթիռի մակնիշ: 12.Արդի հայ արձակագիր Մարկ ...: 15.Հարստության աստվածը մի քանի հին ժողովուրդների մոտ: 18.Բանջարեղեն: 20.Վրաց դերասանուհի ... Միրիանաշվիլի: 24.XV-XVIII դդ. Վրաստանում ֆեոդալական բարձր խավի ներկայացուցիչ: 25.Օրվա մաս: 26.Շինության ծածկ, տանիք: 28.Կաթնատու ընտանի կենդանի: 30.Եմենի նախկին մայրաքաղաքը: 31.Բանաստեղծական-երաժշտական ստեղծագործություն: 33.Ոչ մեծ: 34.Ֆրանսիացի նշանավոր դերասանուհի ... Բեռնար: 38.Մեծ, երեց: 40.Սոսի: 41.Պատկերը արտացոլող ապակի: 42.Պարույր Հայրիկյանի կուսակցությունը (ՀՀ): 43.Եկեղեցական «պաշտոնյա»: 45.Գնացքի մաս: 47.Ածխավաճառ: 48.Մարդ, որը գրում է գեղարվեստական արժեք ունեցող նյութեր: 51.Հայոց թագավոր՝ ... Երկաթ: 52.Խելք, միտք, բանականություն:

*Կազմեց ԷԼԼԱ ԱԹԱԲԵԿՅԱՆԸ*

### ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 1.Ռեւազ: 4.Ճամբարակ: 10.Ավարտ: 11.Ազարտ: 12.Մեջ: 13.Այբ: 14.Տավար: 15.Վախթանգ: 18.Տեգ: 20.Ավանդ: 22.Սեն: 23.Խաչ: 25.Ջեք: 26.Բեն: 27.Վրեժ: 28.Ալանիա: 31.Անի: 32.Բերձոր: 33.Սագ: 34.Տձեւ: 35.Սանկտ: 38.Եզ: 40.Սնել: 42.Նանա: 43.Ջի: 44.Կրծանիսի: 46.Մարս: 47.Հրեղեն: 48.Ցորեն: 49.Քամի:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 2.Երախ: 3.Արտավազդ: 5.Աքաբեկ: 6.Բատատ: 7.Կոջորի: 8.Տաքեւ: 9.Վարազ: 12.Մավր: 16.Արվելաձե: 17.Վեներա: 19.Եղվարդ: 20.Ազա: 21.Աքանես: 22.Սե: 23.Խերսոն: 24.Աժ: 26.Բաբիկ: 29.Նիվա: 30.Ագուլիս: 34.Տեւկանց: 36.Նանի: 37.Տեսիլք: 38.Են: 39.Զարուհի: 40.Սամվել: 41.Եզր: 45.Ծանր:

Գլխավոր խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ
Գլխ. խմբագրի տեղակալ՝ ՅՈՒՐԻ ՊՈՂՈՍՅԱՆ
Համարի պատասխանատու՝ ԳԱՅԱՆԵ ԲՈՍՏԱՆՋՅԱՆ
Համակարգչային ձեւավորումը՝ ՏԻԳՐԱՆ ՍԻՐԱԴԵՂՅԱՆ

ჩვენი მისამართი: თბილისი 0105, გ.ათონელის ქუჩა 5,
Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105 Գ.Աթոնելի փ. 5
ტელ. Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge E-mail: vrastan.press@gmail.com
Գրանցման վկայական № 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

«ვრასტანი»
თბილისი, საქართველო
"ВРАСТАН"
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445